1. Հալիձորի բերդ—անապատ. գտնվում է գյուղից դեպի արևելք երեք չորս կիլոմետր հեռու, մի բարձրության վրա, ամայի տեղում, շրջապատված է անտառներով: Վանք-բերդը պարսպապատ է, ունի մի քանի բուրգեր: Ընդարձակ բակի հարավային կողմում կիսավեր վիճակում մնում են եկեղեցի և այլ շենքեր, իսկ արևմտյան մասում բազմաթիվ այլ շինությունների հիմնապատեր: Այս բերդ-վանքը նշանավոր է նրանով, որ դարձավ կենտրոններից մեկը, 18-րդ դարի սկզբի, Դավիթ Բեկյան ազատագրական շարժումների:

Բերդի բլրի արևելյան լանջում, կես կիլոմետր հեռավորության վրա, մնում են գյուղատեղի ավերակներ, ծածկված վայրի և պտղատու ծառերով:

Այս վայրի հին անունը մոռացված է, ժամանակակից Հալիձոր անունը վերջին դարերից է և հաճախ գրականության մեջ շփոթվում է Գորիսի շրջանի Հալիձոր գյուղի հետ. (օր. Սիսական 257—258):

Մեր աշխատության մեջ հավաքած մի քանի արձանագրություններն ևս հնարավորություն չեն տալիս հին անունը պարզելու:

2. Փառուարաս վանք. գյուղատեղի և վանք. գտնվում է գյուղից մոտ չորս կիլոմետր դեպի հյուսիս, լեռնաշղթայի կատարների տակ, ամայի տեղում, շրջապատված խիտ անտառներով: Պարսպապատ բակի մեջ գտնվում են 2—3 կիսավեր եկեղեցիների և գավիթների շենքեր: Օրբելյանի ցուցակների մեջ հիշատակված են որպես փոքր գյուղ, 6 չափ հարկով՝ Կովսական գավառի մեջ:

Այստեղ ևս պահպանվել են արձանագրությունների չնչին մասեր:

Տեղացիները կոչում են պարզապես—ԱՆԱՊԱՏ:

**410. ՀԱԼԻՁՈՐ (Դավիթ Բեկի բերդ) դարպասից դուրս, հարավում, մեծ և տափակ դերեզմանաքարի երեսին. 14 տ.**



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՅՆԿ|ՍՏԵՅՆԻ, ՄԱՀՏԵՍԻ ՏՐ |
ՀԱՅՐԱՊԵՏԻ, ՍԱ Է ԳԵՂՃ|ԷՆ ԿԱՅԼԵՐՑԻ,
ԱԽԵԼ ԱՆՈՒ|Ն ՍԱ ՏԱՍՏՋԻ, Ի ՏԱՆՍ | ՄԲ
ՄԵՆԱՅՍՏԱՅՆԻ, ԵՂԵԼ | ԲԱՅՋՈՒՄ :ՀԱ: ՏԱՅՐԻ,
ԿՈՋՄԱՄԲ ԵՂԱ ՎԱՅՐԴԱՊԵՏԻ, ՁԻՆ | ...
:ՌՃԽ: Ի ԹՎԻՆ, ՓՈՒՆԴ | ՍՈԴՆ ԱՌԱՔԵԼ,
ԱՆՈՒ|ԱՄԲ ՄԽԱՑՆ ՎԱՅՐԴԱՊԵՏԻ | , ՈՎ ՈՐ
ԿԱՅ ԱՅՍ ՏԵՂԻ , | ԱՍԱ ԱԾ ՈՂՈՐՄԻ, ՏՐ ՔՍ
ԻԿՐՆ ՈՂՈՐՄԻ:

Լուսանկ. տախտ. XXXIX, 144



411. ՀԱԼԻՁՈՐ (Դավիթ Բեկի բերդ) եկեղեցու հյուսիսային պատին, մկրտարանի վրա դրված ջարդոտված խաչքարի թևերի մեջ։

412. ՀԱԼԻՁՈՐ (Դավիթ Բեկի բերդ) եկեղեցու ներսում ընկած փոքրիկ խաչքարի բեկորի վրա. 2 տ.




ՍՏ[Ե]ՓԱՆՈՍ. ՔՍ. ՅԻՇ[Ե]ՑԷ[Ք]

413. ՀԱԼԻՁՈՐ (Դավիթ Բեկի բերդ) պարսպից դուրս, արևմուտքում, տապանաքարի վրա։



ԱՅՍ ՏԱՊԱՆ ԿՈՒՐՃԻ ՄՕՍ[Ե]ՍԻ[,] ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ԹՎ. ։ՌՃՀԴ։

Հազարավորի տեղը որոշակի Ո է գրված, կարծում ենք սխալմամբ։

ՀԱԼԻՁՈՐ (Դավիթ Բեկի բերդ), երկու տապանագրեր, որոնք այժմ տեղում չկան.

414. Այս է տապան Առաքել վարդապետի առաջնորդի Ստաթէի Վանուց ։ՌՃԿ։

415. Այս է տապան Փառսադանի կողակից Ոեհանին ։ՌՃԴ։

Ն. Մ. Թանգ. «Նոր դար» 139, 1891 թ., որից արտագրելով Ալիշանը, սխալմամբ Գորիսի շրջանի Հալիձոր գյուղի տեղագրության մեջ է դնում. (Սիսական, 257—258)։

416. ԲԵՀ. Փառուստա վանք. եկեղեցու արևմտյան պատի մեջ արտաքուստ ագուցված քարի վրա. 4 տ.



Արձանագրությունը եղել է մեկից ավելի քարերի վրա, որոնցից այս մեկն է մնացել։ Գրված է ուռուցիկ տառերով։

Լուսանկ. տախտ. XLI, 151